ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«23» «Փետրվար» 2026թ N ՄՊ/103-Ա

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 12-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի գյուղատնտեսության բնագավառում տիրող իրավիճակի վերաբերյալ մշտադիտարկում իրականացնելու նպատակով.

որոշում եմ՝

1. Ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:
2. Աշխատանքային խմբի ղեկավարին (Ա. Այվազյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել համայնքների ղեկավարներին և ջրօգտագործողների ընկերությունների գործադիր տնօրեններին (համաձայնությամբ):
3. Աշխատանքային խմբի ղեկավարին (Ա..Այվազյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքների կատարման արդյունքների մասին պարբերաբար զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ (Ա. Համբարձումյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքների կազմակերպման համար տրամադրել ծառայողական հերթապահ ավտոմեքենա:

5. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի Ֆինանսական վարչության պետին (Ա. Հակոբյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
6. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի խորհրդական Արբակ Եղիազարյանին:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: KHACHATRYAN VAHRAM 29028401770 **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

04447253

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի
2026թվականի փետրվարի 23-ի
ՈՄՊ/103-Ա որոշման

Կազմ
աշխատանքային խմբի

Աշխատանքային խմբի ղեկավար՝

Ա. Այվազյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ

Անդամներ՝ Ա.Բեգլարյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ

Կամո Մարգարյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության ավագ մասնագետ

Զինավարդ Սարդարյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ

Восстановимая подпись

07.08.2024 12:44:00 UBUT

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023

Գլխավոր քարտուղար՝ Ա. Հովհաննիսյան